

# **ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԷՐ «ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒՔՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒՔՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻՆ**

23.02.2017 10:48

Արդարադատության ոլորտում գոյություն ունեն մի շարք խնդիրներ և դրանց վեր հանման նպատակով այսօր «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի ղեկավար կազմի անդամները հանդիպում ունեցան Փաստաբանների պալատում՝ ՓՊ նախագահ Արա Զոհրաբյանի և անդամներից ոմանց հետ:

Ի ղեկավար Կարեն Զադոյանը, ներկայացնելով ծրագիրը, նշեց, որ նախատեսվում է արդարադատության, կրթության, բիզնես և մի շարք այլ ոլորտներում հանրային քաղաքականություններ մշակելու նպատակով զարգացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողություններն ու ներուժը. «Մենք ուզում ենք դրամաշնորհներ տրամադրել այս ոլորտներում՝ ՔՀԿ-ների ունակությունների զարգացման համար, որ նրանք կարողանան կառուցողական երկխոսություն սկսել ոլորտի դերակատարների հետ և խնդիրներն այդ ձևաչափով լուծել»,- նշեց պարոն Զադոյանը՝ հավելելով, որ ներկայումս ծրագրի շրջանակներում բանակցություններ են վարվում ՀՀ առաջատար բուհերի հետ, նախատեսվում է, որ ուսումնական հաստատություններից մեկը մրցույթի արդյունքում հնարավորություն կունենա ՔՀԿ-ների համար մշակել ուսումնական մոդուլներ, որոնք ուղղված կլինեն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման, փաստերի հիման վրա քաղաքականությունների ձևավորման, հանրային վերահսկողության, կառուցողական երկխոսության և կոալիցիաների կառուցման խնդիրներին: Այն ՔՀԿ-ները, որոնք կանցնեն ուսումնական այս գործընթացի միջոցով, հնարավորություն կունենան մասնակցել ծրագրի շրջանակներում հայտարարվելիք դրամաշնորհային մրցույթներին:

Բացի այդ, պարոն Զադոյանը շեշտեց, որ ծրագրի շրջանակներում նախատեսվում է արդարադատության և այլ ոլորտներում ուղղակի ու անմիջական կապ հաստատել քաղաքացիների հետ՝ ներդնելով միջազգային լավագույն փորձը՝ վեր հանել և հասարակության պահանջներից բխող լուծումներ տալ ոլորտային խնդիրներին:

Կարեն Զադոյանը նաև անդրադարձավ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի ներգործությանը մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքին՝ շեշտելով. «Հայաստանում հակակոռուպցիոն օրակարգը հիմնականում կոալիցիայի կողմից է ձևավորվում՝ կառավարության հետ համատեղ: Մենք համակարգային լուրջ փոփոխություններ ենք իրականացրել՝ սկսած ապօրինի հարստացումից, ազդարարների իրավունքների պաշտպանության ինստիտուտից և այլն»,- ընդգծեց ծրագրի ղեկավարը:

Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը կարևորեց ծրագիրը՝ պատրաստակամություն հայտնելով համագործակցել. «Մենք պատրաստ ենք ու ուրախ համագործակցել, վստահ եմ այդ համագործակցության արդյունքում հասարակությունը կշահի»,- ասաց նա:

Զոհրաբյանն առանձնացրեց մի շարք խնդիրներ, մասնավորապես նա ասաց, որ պրակտիկան ցույց է տալիս, որ կան ոլորտներ, որտեղ փաստաբանները մասնագիտական խնդիրների են բախվում, մասնավորապես հարկային և քննչական գործերով. «Հաճախ ենք հանդիպում իրավիճակների, երբ փաստաբանը, ով քրեական դատավարությանը լավ է տիրապետում, իրազեկ չէ հարկային իրավահարաբերություններից և հակառակը, մենք մտադրություն ունենք այդ խնդրի լուծմանն ուղղված ծրագիր ստեղծել ու մոդուլ հիմնել՝ վերապատրաստելով փաստաբաններին: Եթե այս դաշտում մենք չկարողացանք փաստաբաններին լրջորեն վերապատրաստել, միշտ խնդիր ենք ունենալու»,- նշեց ՓՊ նախագահը, իսկ Կարեն Զադոյանը առաջարկեց նաև իրազեկումներ իրականացնել այս խնդիրը լուծելու ուղղությամբ:

Բացի այդ, պարոն Զոհրաբյանը նշեց, որ պալատն իր առջև նպատակ է դրել բարձրացնել ինչպես փաստաբանի հեղինակության դերն, այնպես էլ հանրային գիտակցությունը:

Առաջարկվեց նաև որոշակի իրավական խնդիրների շուրջ ուսումնական մոդուլների թեմաներ ընտրել, ինչին կաջակցի պալատն՝ իր փորձագիտական խմբով, ինչպես նաև որպես խնդիր վեր հանվեց սեփականության իրավունքի ոլորտը:

Հանդիպման վերջում կողմերը պայմանավորվեցին աշխատանքային ձևաչափով հանդիպումներն առավել ինտեսիվ դարձնել:

Նշենք, որ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն կյանքի է կոչվելու Իրավաբանների հայկական ասոցիացիայի և գործընկերներ կազմակերպությունների «Ազորա Մենթորլ Յոուրոփ» ՀԿ-ի (Չեխիա), Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնի (ՍԻՎԻՏԱՍ), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, ՓՄՁ համագործակցության ասոցիացիան և Հայաստանի համայնքների միության հետ:

Հրապարակումն՝ ԻՐԱՎԱԲԱՆ.ՆԵՏ կայքի

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```